ՔՈՒԼԻԵՏ ՄԱՏԻՆՅԱՆ

ՁԼՈՒԹՈՒՍՆ ՈՒ ՏՂԱՆ

Մա ԱՐ
Մ-33



„ՀԱՅԱՍՏԱՆ" ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ 1973

Ар 2
Ս 33

41264

$U\ \frac{0763-(361)}{701(01)-73}$ -- 223—73 «S»

ДЖУЛИЕТ АВЕТИКОВНА МАТИНЯН

ГЛОБУС И МАЛЬЧИК

(На армянском языке)

Издательство «Айастан»
Ереван, 1973 г.

ԳԼՈՐՈՒՍԸ

— Բարև, տղա՛։

— Բարև, Գլորուս, իմ անունն Արամ է։

— Անունները կարևոր չեն, կարևորն այն է, որ անուն թողնես։

* * *

Այստեղ խոսվելու է արևի, Ջրաշուշանի, «արվեստագետ Բենոյի», ցորենի արտի, կոմբայնի, վիճակամցի փոքրիկների, Նասայայի, հենակների, համփորդելու, շուկայի թանկ ու էժանի, կորած թալիսմանի, բուկլից անելու, համբերության, ծաղկող Թորիկի, Ֆանտոմասի և վերջին դանգերի մասին։

* * *

Սրագում Գլորուսը գլորվում է՝ տղան վազում է բռնելու։

ԱՐԱՄ — Մայրի՛կ...

— Ի՞նչ, Արամ։

ԱՐԱՄ — Պայթեցինք։

— Չեմ լսում։

ԱՐԱՄ — Ասում էմ՝ ես ու Գլոբուսը պայթեցինք։

— Քնի՛ր, այլ օր կիրակի է։

ԱՐԱՄ — Ես պայթած-պայթած քնել չեմ կարող։

— Ամբողջ օրն ինձ պայթեցնում են քո պատճառով։

* * *

Այս հին գլոբուսը մորաքույր Աստղիկն էր դպրոցից բերել, նրանով պետք է շրջեմ աշխարհը։ Ականջս հպում եմ և մատով տկտկացնում գիտուն գլխին։

ԳԼՈԲՈՒՍ — Ի՞նչ ես տկտկացնում։

— Ուզում եմ ինչ-որ բան որոշել։

ԳԼՈԲՈՒՍ — Որոշեցի՞ր...

— Որոշեցի չտկտկացնել։

Պատում եմ գլոբուսը.

— Ուշադրություն, ուշադրություն, խոսում է Գլոբուսի գյուղական կայանը, նա նորություն չի ասելու, որովհետև ինչ կա աշխարհում, հին է։ Այնքան հին, որ վաղուց շատ անգամ ասվել է։

ԳԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ՄԵՆՔ ԳՅՈՒՂՈՒՄ

ԵՍ — Հավիկ ջան, շատ եմ ձու սիրում, իսկ շուկայում թանկ է։ Բոլոր մարդիկ գիտեն օրական ինչքան են ուտում, իսկ դու չգիտես, ինչքան տան՝ կուտես, անխելք-անկուշտ ես։ Մայ-

րիկն ասում է՝ քեզ նման շատ հավեր կան աշխարհում, կուտ ուտում են, իսկ ձու չեն ածում։ Այդպիսի հավերին պետք է մորթել։

ՄԱՅՐՍ — Արա՛մ, արի այստեղ։

ԵՍ — Մամ, փիսիկին կաթ տամ, կգամ։ Կերա՞ր, փիսո ջան, այ այդպես, դու լավ կատու ես։ Տես, ամեն ինչ պետք է փրոռել, որ չորանա։ Աշխարհում չպետք է ոչ մի թաց շոր մնա, գնամ մայրիկին օգնեմ։

ՆՈՒՆՈՒՇ — Արամ, ամի խաղանք։

— Ի՞նչ խաղանք, քարկտիկ չեմ ուզում։

ՆՈՒՆՈՒՇ — Արև-ամրև։

— Ես այդ խաղը չգիտեմ։

ՆՈՒՆՈՒՇ — Նստիր գետնին, ձեռքերդ դիր աչքերիդ, վերև նայիր, կարմիր բան չե՞ս տեսնում։

— Չէ։

ՆՈՒՆՈՒՇ — Մի սեղմիր։

— Ոչինչ չի երևում։

ՆՈՒՆՈՒՇ — Չէ, պետք է երևա, ես տեսնում եմ։

— Ի՞նչ ես տեսնում։

ՆՈՒՆՈՒՇ — Իմ մայրիկին։

— Քո մայրիկը չէ, իմ մայրիկն է։

ՆՈՒՆՈՒՇ — Սուտ է, արևի վրա ոչ մի մայրիկ էլ չկա։

— Կա։

ՆՈՒՆՈՒՇ — Չկա։

— Դե որ չկա, ստացիր։

ՄԱՅՐՍ — Քանի անգամ եմ ասել...

— Ինքը ճանկռեց, հետո էլ ասում է, թե արևի մեջ իր մայրն է երևում, միայն իրենը։

ՆՈՒՆՈՒՇ — Սուտ է ասում, մորաքույր, շատ վատ տղա է։

ՄԱՅՐՍ — Մի օր, երբ աշխարհում տարբեր առիթով վիրավորել են միմյանց, արևը մարդկանց կանչել է՝ «Ձեր մայրը հողն է, ձեր հայրը՝ ես։ Եղբայրները չպիտի կռվեն»։ Մարդիկ ամաչել, գնացել են։

Անցել է ժամանակ, արևի խորհուրդը մոռացած՝ նոր մարդիկ նորից սկսել են վեճ ու կռիվ։ Արևը չի սիրում այդպիսիներին։

ԵՍ — Մամ, աշխարհն է՞լ է արևի պես...

ՄԱՅՐՍ — Չէ՛, տղա՛ս, չէ՛։

ՆՈՒՆՈՒՇ — Փուհ-փուհ, ես գնացք եմ, գնում եմ արևի մոտ։

* * *

ԱՐԱՄ — Մենք մի ժամանակ շատ փոքր էինք, և քարկտիկից այն կողմ չէինք անցնում։
ԳԼՈԲՈՒՍ — Բոլորն էլ մի սահման ունեն, որից այն կողմ չեն անցնում։

Հետո, երբ Նունուշը գնացք խաղալով գնաց արևի մոտ, նրան փոխարինեց Շուշանը, որովհետև մենք քաղաք եկանք։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՒՇԱՆԸ

Ես մտածում եմ բոլոր մեծ ու փոքր աղջիկների մասին, որոնք ընկեր ունեն Արամ անունով, կամ, որոնք ընդհանրապես ընկեր չունեն։

Ես մտածում եմ ծաղիկների մասին, որոնք նման են աղջիկների։

— Արա՜մ,— հանկարծ հարցնում եմ,— ես նման՞ եմ ծաղկի։

— Չէ՜ մի, դու փշեր ունես, ով մոտենա քեզ շոյելու, կարյունոտես, դու չար ես, դու քար ես,— հանգավորված քաշում է հյուսքերս,— դու աշխարհի ամենալավ աղջիկն ես, քո անունը Ջրաշուշան է։

— Իմ անունը Շուշան է։

— Միևնույն է, դու Ջրաշուշան ես,— ծղրտիակում է նա հաշվողի տոնով ու բացում «ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ»։

Ես սկսում եմ մտածել ջրաշուշանի մասին. նուրբ է, միայն մի կլոր տերև, կողքը քիչ կտրած, միայն մեկ ծաղիկ ունի քնքուշ ու հոտավետ։ Ասում են՝ նրա ծաղիկները չորս օր բացվում, փակվում են ու իջնում ջրի մեջ սերմ տալու։ Նա միայն ճերմակ է։

Մինչ ես միտք եմ անում ջրաշուշանի մասին, Արամը կարդում է «ԱՅԲԻՆԱՐԱՆԸ»։ Մայրիկը գնացել է խանութ,

Ես գրել եմ տնային «Կ-նս։ Արամն ու ես դպրոցում նստում ենք նույն նստարանին, նա ուսուցչուհուց գաղտնի ձգում է իմ հյուսքերը։

— Բայց դու մի բան չգիտես, ամենակարևորը,— ասում եմ Արամին։

— Ի՞նչ։

— Դու չգիտես փշոտ ծաղիկների մասին,— ես ցույց եմ տալիս սենյակի անկյունը, կակտուս, հալվե ծաղիկները, որոնք սրերի պես ցցել են իրենց փշերը։

— Էդ ո՞նց չգիտեմ։

— Նրանք են չար, իսկական չարերը նրանք են, ծաղկի մեջ աղջիկ կա, աչքերը ծովի պես կապույտ։

— Ուրեմն սրանք քո գիտեցած ծաղիկները չեն,— եզրափակում է նա մեծավարի։ Ես նայում եմ ծաղիկներին և ուզում եմ հեռանալ Արամենց տնից։

— Մի գնա, Շուշան։

— Չեմ ուզում։

— Դե լավ, մնա, մինչև մայրիկը գա։

— Չեմ կարող։

Ուզում եմ ասել, որ ինքն էլ մի փուշ է։

Գնում եմ, որովհետև սրերի պես ցցված իրենց փշերով ինձ ամենևին դուր չեն գալիս կակտուսն ու հալվեն։ Չգիտեմ, եթե վաղը նստենք նստարանին, ես կարո՞ղ եմ Արամին ասել այդ։ Եվ ընդհանրապես ասել պե՞տք է։ Վաղը վերջին օրն է, գալիս է ձմեռային արձակուրդը, իսկ հետո կտեսնենք։

Մայրիկը գալիս է, ես թաքցնում եմ արտասված աչքերս։

— Ուզում եմ ջրաշուշան տեսնել,— աղաչում եմ՝ պոկ չգալով հագուստներից։

— Կտեսնես,— զարմացած իմ խոսելու տոնից, պատասխանում է մայրիկը,— ամառը դա, կտեսնես։

Անցնում է հոմվարյան արձակուրդը, անցնում է և տարվա մյուս կեսը հնի պես։ Մենք վերջացնում ենք «Այրբենարանը» և «Ընթերցարանը»։

Գալիս են ամառային արձակուրդները։

— ...

Արամը գյուղ է գնալու։

Ջեռագործիս առեղը մի գլուխ մատս ծակում է։

Արամը երևաց շեմին՝ ջրաշուշան էր գործածս, ինչպիսին տեսել էի երազում։ Արամը մոտեցավ՝

— Փշոտ ծաղիկներ պետք չեն, խնդրեցի, մայրիկը դուրս հանեց սենյակից։ Ես գիտեմ, որ... աշխարհի ամենալավ ծաղիկը ջրաշուշանն է։

Ես գլուխս կամաց-կամաց բարձրացնելով տեսա նրան։ Նա ձեռքը մեկնեց ինձ։ Ես անցած կես տարվա մեջ առաջին անգամ նայեցի աչքերին, նրա աչքերը կապույտ էին ծովի պես։

Ես ծածկեցի տան դուռն ու լաց եղա. ուրախությունի՞ց, որ նրանց տանը էլ փշոտ ծաղիկ չկա։ Ցավի՞ց, որ ամառը չեմ տեսնելու Արամին։ Հպարտությունի՞ց, որ աշխարհի ամենալավ ծաղիկը ջրաշուշանն է, թե՞ տխրությունից, որ մարքուր ջրում չի աճում։

Անցնում էին գեսի պես երկար օրերը։ Իսկ գեսերը երազում լճակներ էին դառնում՝ նրանց մեջ օրորվող ու երգող ջրաշուշաններ, ճերմա՜կ, ճերմա՜կ...

ԱՐԱՄ — Ինչո՞ւ ես ինձ խուսափում։

ԳԼՈՐՈՒՍ — Ուզում եմ ինքդ քեզ ճանաչես։

ԱՐԱՄ — Ես ճանաչում եմ նաև Շուշանին։
ԳԼՈԲՈՒՍ — Ամեն տեղ աղջիկները չափազանց նման են, ընդանք շատ քիչ են փոխվում։
ԱՐԱՄ — Չգիտեմ, բայց երեխաները երեխաներին են նման, մեծերը՝ մեծերին։
ԳԼՈԲՈՒՍ — Մեծերն էլ են երեխաների նման։

Հետո, շատ հետո Արամը Շուշանին կպատմի, թե ինչու մեծերն էլ երեխաների նման են, հիմա մեծանում է։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

«ԱՐՎԵՍՏԱԴԵՏԸ»

Մեր պապերի գյուղը մեկ է՝ հարցակոնի պես կախված է ձորապոնկից։ Գյուղից դուրս լայն հարթության վրա նոր կառուցած հատուկենտ տները հիշեցնում են կախման կետեր։ Կետերը գիծ կդառնան, փողոցի երկայնքով կձգվեն շենքերը, ձորից կբարձրանա վերջին ծերունին։

Մի օր մեր բակի տղաները հավաքվել, միճում էին, թե ով կանցնի ջրանցքը։ Խմբին մոտեցավ մի սիրուն տղա՝ մազերը ոզնու փշերի պես ցցված.

— Քանի՞ մետր է խոչությունը։

— Վեց,— պատասխանեց Սեթը։

Նորեկը նայեց տղաներին, վճռական մի շարժում արավ և արագ-արագ հանվելով՝ նետվեց ջուրը։ Տղաները մեկեն իրար նայեցին։ Ես սարսռացի՝ տեսնելով նրա մարմինը օդի

մեջ։ Մենք շունչներս պահած սպասում էինք, թե երբ կերևա փոքրիկ գլուխը պղտոր ջրում։

— Խեղդվեց։

— Հիմա կերևա,— վստահ ու լուրջ հաստատեց Սեթը։

Իսկապես որ, նորեկը դուրս եկավ ջրի երես, վարժ շարժումներով հասավ մյուս ափը։ Տղաները սկսվել էին։ Նորեկը մյուս ափից թափահարեց ձեռքը, աքաղաղի նման ծուլ-ծուլ լինելով՝ ջուրը շրջանցեց, ետ եկավ։ Նախանձից լռած տղաների խումբը մի կողմ քաշված դիտում էր։

— Երևում է՝ լավ լողալ գիտես, ծանոթանանք։

— Բենո՛, կողքի բակից եմ։

— Իսկ ես լավ նվագել գիտեմ,— վրա բերեց Սեթը նախանձից կկոցած աչքերով։

— Պա՞հ, մեծ բան է, ես էլ եմ արվեստագետ։

— Ի՞նչ,— չհասկացավ Սեթը։

— Ի՞նչ, ի՞նչ, չեք հասկանում, նկարիչ։

Նկարիչ լինելն իմանալուն պես մոտեցա. նկարներ ու նկարվել շատ եմ սիրում, սուլելուց էլ շատ։

— Իսկական նկար ես անո՞ւմ, թե՝ հենց այնպես,— քննում էր ճավատան Սեթը,

— Ո՞նց թե հենց այնպես, պիոներ-պալատում նկարիչ եմ։ Ծանոթացանք։— Այդ օրվանից մտքիցս չէր գնում նկարվելու ցանկությունս։ Երբան ես շտապեցնում էի Բենիկին, այնքան նա նույն խոսքե՞ն էր կրկնում.

— Կգնանք գյուղ, կնկարեմ, նկարիչին հանգիստ է պետք, խոհեր։

Պապիկիս տունը ժայռի վրա էր, իսկ ժայռի տակ ձորն էր

ու վշշացող գետը՝ ոնց որ նկար։ Մի խոսքով կարող էի երազել, օրերով կորչել անտառում, հեքիաթներ հորինել։

Գնացինք։

Առաջին օրը ոտնատակ տվինք գյուղը, հանդիպեցինք նունուշին, հետո իջանք ձոր, թափառեցինք, մինչև աստղերը մեկիկ-մեկիկ կախվեցին երկնքից, իսկ հետո պապս հազիվ գտավ մեզ ու խրատներ կարդալով տարավ տուն։ Ոչ սովորելու դաս կար, ոչ լուծելու խնդիր. առավոտից իրիկուն թափառիր, սուլիր՝ ինչ ուզում ես, վազիր՝ ինչքան կարող ես։

Գիշերը խոր քնեցի, իսկ առավոտյան լուսամուտից կախված արևը աչքով անելով կանչում էր։

Թռա։ Այգու ծայրին Բենիկն սպասում էր ինձ։ Նախորդ երեկո որոշել էինք գնալ բերդի ավերակները, որ թառած էին Կոթ քարի գլխին։ Ավերակ բերդի ժայռերը ասես տաշած լինեին։ Բենիկը ձեռքը ճակատին դրած՝ ուշադիր զննում էր կիսաքանդ պարիսպը, որի վրա հին-հին գրեր կային՝ անհասկանալի ու առեղծվածային։

— Ներշնչում է,— ձայնը փոխեց Բենոն։

«Ըհը,— անցավ մտքովս,— բաց չթողնեմ, հազիվ ներշնչվում է»։

— Լսիր, ինձ էլ բերդի ավերակների վրա փորագրիր, ոնց որ պատմության հերոս։

— Կոմպոզիցիան լավ չի լուծվի,— ձեռքը ճակատից իջեցնելով պատասխանեց նա։

— Ի՞նչ, հայերեն ասա։

— Ասում եմ հետո կնկարեմ, մի քանի օր դեռ պետք է գծեմ դեմքդ, որ ձեռքս վարժվի։

— Ի՞նչ կա որ, գծիր։

Այդ օրվանից Բենիկն սկսեց իմ դեմքը գծմծել պատահած քարերի վրա, իսկ ես քայլում էի կուրծքս ցցած՝ հպարտ-հրպարտ։

Մի սովորական օր էլ, երբ նորից բերդին հյուր էինք եկել՝ նա ասաց.

— Լսիր, Արամ, թուղթ չեմ բերել, ոչ էլ ներկապնակ, դու մի մեծ կտոր ածուխ ճարի, կարգին փորձեմ։

Ծտի պես թռա... ավերակների մոտերքում հովվական մոռացված օջախներ կային՝ գրպանս լցրի ածուխներով, մի խոշոր կտոր էլ բռնած ձեռքիս՝ ետ վազեցի.

— Ահա բերի,— ձեռքիս ածուխը հևալով մեկնեցի նրան։

Բենիկն ածուխի մի կտորը մաշեց չեչոտ քարերին քսելով։

— Կանգնիր զզաստ, չխոսես, մի կետի նայիր ու քարացիր։

Մի քանի երեխաներ, որ դաշտում գառներ էին արածացնում, հետաքրքրությամբ մոտեցել էին մեզ։

Բենիկը ստեպ-ստեպ նայելով ինձ՝ մի քանի վարժ գիծ քաշեց։ Ես վիզս ձգած սպասում էի.

— Հիմա նայիր, բայց էլի մշակելու գործ կա։

Ջրակալած աչքերս հառեցի նկարին. մի կլոր շրջան, աչքերիս տեղը նորից շրջաններ, քիթս՝ մաշված շեշտ, շուրթերս՝ հավասարման նշան, իսկ ականջներս... ջարդված կաթսայի ծռված բռնակներ։

Վիզս ծուռ, դեմքիս մի կիսատ ժպիտ՝ ես նայում էի նրա նկարածին։ Երեխաները, որ մինչ այդ լուռ էին, մեկեն սկսեցին ծիծաղել.

— Պա՜հ, ձմերուկ է նկարել։

— Ի՞նչ է, չեք հավանո՞ւմ...,— ինչպես միշտ՝ աքաղաղի պես վրա պրծավ կարմրած Բենոն։

Ծիծաղն ավելի սաստկացավ։

Բենոն խռոված դեն նետեց կիսամաշ ածուխը և իրենից փոքրերին վախեցնելու համար բռունցքներ ցույց տալով՝ առաջ եկավ։

— Շատ էլ նման է, Բենիկ, գնանք,— ծռված վիզս ուղղելով քաշեցի նրա թևը։

— Հազիվ թե հասկանաք, անգրագետներ,— փնթփնթում էր նա քթի տակ, հետո տեսնելով դեմից եկող մորուքավորին՝ ճամփից ետ քաշվեց։

Մարդը ֆոտոապարատով էր։ Նա անցավ՝ չնկատելով մեզ ու հասավ առաջվա մեր կանգնած տեղը։ Նայեց շուրջը, նկատեց ածխանկարը խոյակի վրա։ Հետո հանդիմանանքով մաքրեց այն։

Ճերմակ թաշկինակը ամոթից սևացավ։

Ես ուրախացա «մաքրված» պատկերիս համար։

— Դե դա առաջին փսկական փորձն էր, հետո ավելի հաջող կլինի, մեծ նկարիչների հետ էլ է պատահում,— խոսում էր մխիթարելո՞ւ, թե «սրբված» տաղանդի համար։

Ես մոտեցել, նայում էի, թե ինչ է գրելու ծոցատետրում անծանոթ մարդը։ Նա թաշկինակով դեռ երկար մաքրում էր այդ քարի փոշին, հետո դողդոջուն ձեռքով գրեց՝ ՀՈՂԻ ՊԵՍ ԽՈՆԱՐՀ ԵՂԻՐ, ՈՐՔԱՆ ՏՐՈՐԵՆ, ԱՅՆՔԱՆ ԿԱՄՐԱՆԱՍ...

Ես չհասկացա քարերի գիրն էր, թե՞...

Եվ ամաչեցի։

Բոպեաչափ լռությունն ինձ ժամեր թվաց։ Ես կաշկանդվել էի ինչ-որ զգացումից, կոկորդս խտուտ էր գալիս։

Մենք դեռ երկար նայում էինք բերդի ավերակներին, իսկ Բենոն՝ իր կոշիկներին։

Գառնարածները գնացել էին։ Նունուշը մնացել էր կանգնած։ Ջորում աղմկում էր Սեվդու գետակը, պապիս տունն էլ հարցականի պես դեռ կախված էր ձորապռնկից։

Ամառն անցավ, սկսվեցին գրելու և սովորելու օրերը։

ԱՐԱՄ — Մի խորհուրդ տուր։

ԳԼՈԲՈՒՍ — Իմ վրայից մաքրիր փոշին, քո վրայից՝ անհոգությունը։

ԱՐԱՄ — Ինչի՞ց սկսեմ։

ԳԼՈԲՈՒՍ,— Սկսիր լվացվելուց, թարմացնում է։

ԱՐԱՄ — Լվացվեցի։

ԳԼՈԲՈՒՍ — Կարդա։

ԱՐԱՄ — Կարդացի։

ԳԼՈԲՈՒՍ — Գնա խաղալու։

ԱՐԱՄ — Գնացի, Գլոբուս։

ԳԼՈԲՈՒՍ — Սպասիր, գնալը հեշտ է, եկ ինձ մոտ, ամեն ինչ կարևոր է՝ փոշի մաքրելը, լվացվելը, կարդալը, լսելը... անկարևոր բաներ չկան։

Երկար ընդմիջումից հետո Գլոբուսի ընդունիչը միանում է։ Նա շատ բաներ է պատմում աշխարհի ու երեխաների մասին։

ԵՍ ԳԻՏԵՄ, ՈՐ ԱՄԵՆԱՇՈՒՏՆ ԱՅՍՕՐ ԵՄ ՀԱՍՆԵԼՈՒ ՏՈՒՆ

Մայրիկին խոսք էի տվել՝ ինչ կերպ լինի, պատմվածք գրել տանձի, խնձորի ու աշխարհի մասին։ Դե տանձը տանձ է, ուտելիս շուրթերդ ճպճպացնում ես, խնձորն էլ ամենալավ միրգն է ամռան ու ձմռան կեսերին։ Իսկ աշխարհը խնձորից այնքան մեծ է, որ գրել վախենում եմ։

Եվ ընդհանրապես, դպրոց գնալ-գալը մի-մի պատմվածք է, հարկավոր է միայն ուշադիր նայեմ շուրջս, պայուսակներին, երեխաներին, մեկ էլ տանձ տեսնելիս չմտածեմ միայն ուտելու մասին։

Մինչ ես մտածում էի որևէ պատմվածք հորինել՝ Մարտի 8-ը հոլի պես գլորվելով մոտենում էր։ Ես ուզում էի մատս շարժեի, մի քանի օր հոլը կանգներ, քնեի, վեր կենայի և պատմվածքը գրված, մեքենագրված մեկնեի մայրիկին։ Ու այդ օրը լիներ մատիս կախարդական շարժումով կանգնած Մարտի 8-ը։

Ես անգիր գիտեմ աշակերտական կանոնների բոլոր կետերը ծայրից ծայր, որ ուսուցիչ տեսնելիս գլխարկը վերցնում են, որ դասին խոսել չի կարելի, չի կարելի հրել կողքդ նստած Շուշանին, որ նկարչության դասին պետք է նկարել, հարցեր տալ ձեռք պարզելուց հետո, խոսել, երբ ուսուցիչը կասի՝ հապա՞...

Ես այս բոլորը ծայրից ծայր գիտեմ ու կարող եմ առանց շփոթվելու ասել մայրիկին, իսկ մայրիկը հպարտանալով իմ կանոնավոր հիշողությամբ՝ կժպտա, ես ոգևորությամբ կավելացնեմ.

Դ. Հ. Ս. Ս. Ի. Ա. Ն. Ի. Ա. Ն. Ի. Ա. Ն

— Ամենալավ բանը տանձն է, խնձորը, դու՛, մայրիկ, մեկ էլ նկարելը։

Բայց երբ գալիս է զանգի ժամանակը, ես հաճույքից ճըչալով դուրս եմ վազում։ Իսկ նկարչության դասատուն կարմրած կանչում է՝

— Ո՞ր...

Նկարչության դասատուն, այսինքն՝ ընկեր Գեղեցիկը։

Նա նման չէ մյուսներին ու գիտի ամեն ինչ նկարել։ Իսկ այդ մեզ համար նշանակում է ուղղանկյունի, հաստ թերթերով տետր, գունավոր մատիտների տուփ, մեկ էլ գունավոր մի աշխարհ։

Ձիմա կպատմեմ, թե ինչից սկսվեց ամենահիմնականը, այն, թե այսօր առաջին անգամ ինչու ամենաշուտը պետք է տուն հասնեմ, և թե ինչ օր է այսօրը։

Ընկ. Գեղեցիկը այսօր սովորականի պես մտավ դասարան, սովորականի պես ոտքի կանգնեցինք և անսովոր ժպտալով՝ շնորհավորեցինք նրա տոնը։ Նա հուզմունքից կարմրեց, հետո հանեց մի գիրք, և սկսվեց նկարչության դասը։ Գրքի առաջին էջում նկար կար՝ արտ, սովորական կոմբայն, որը կալսում էր։

Դասատուն ասաց.

— Արտը... առաջ հող է եղել, պինդ ու քարքարոտ, հետո քարերը փոցխել են, վարել, հեռացրել կոշտերը, հետո էլ բարի սերմնացանները ցանել են ոսկի ցորեն, իսկ հետո ցորենը հողում արևի կարոտից ծլել է, կանաչել է արտը, հասել ու ծփացել է քամու մեղմ հպումից։ Եկել է հնձելու պահը, հանդացել է կարմիր մի կոմբայն, ցողունից կտրված հաս-

կերը խոնարհվել են, որ կալավեն, դառնան ալյուր, հաց ու կյանք։

Տիրեց լռություն, ես ոչ միայն ցորենը տեսա, այլև արտ վարողի քրտինքը, սերմնացանի ժպիտը, լսեցի և կարմիր կոմբայնի հանդյունը։ Այդ տեսավ ու լսեց նաև կողքիս նստած Շուշանը։ Ուզեցի այդ մասին անպայման ասել ընկ. Գեղեցիկին, բայց նա՝

— Հարցերը՝ դասի վերջում։

Ակսեց նկարել գրքի գունավոր աշխարհը գրատախտակի հարթ երեսին, նկարելիս մատները կավիճից սպիտակեցին։

Ես հաշվում էի տուփիս կարմիր ու կանաչ մատիտները։ Ես ուզում էի նրանք առանց ինձ նկարեն։

Ընկ. Գեղեցիկը հերթով մոտեցավ բոլորին, ուղղեց, ձեռքը դրեց Շուշանի գլխին։ Նա թեքվեց իմ կողմը, ուր թղթի վրա կիսատ արտ կար, մատիտների կիսաբաց տուփ, մեկ էլ փոքրիկ մի ձեռք, որի մատների մեջ դողում էր կարմիր մի մատիտ։

Ես ուզեցի ասել, որ ամենալավ նկարը կյանքում այդ ցորենի արտն է, որ քամու շոյանքից խոնարհվում է, մեկ էլ փայլուն կոմբայնը, որն արևի տակ նմանվում է հրաշքի, բայց հանկարծ ինքս ինձ տեսա նրա խոնարհված աչքերում և...

Նա հանդիմանանքով շարժեց գլուխը, երբ նայեց կիսատ նկարին, իսկ ես շարունակեցի մտածել աշխարհի երկար դեմքերի ու պարզ աչքերի մասին, որոնց մեջ ավելի գեղեցիկ է երևում աշխարհը։

Ես հենց նոր, երբ նա հեռացավ իմ մոտից՝ հասկացա, որ ընկ. Գեղեցիկի աչքերի մեջ բացի ինձանից արտի ժպտանք

կար, մեկ էլ սերմնացանի ժպիտ։ «Ոչինչ, ոչինչ, որ չկարողացա նկարել ցորենի արտը, որ սեղանի մի ուրը ինձ մոտ երկար է ստացվում»։

— Ես, ընկ. Գեղեցիկ...

— Ասա՛, Արամ։

— Ես ուզում էի ասել, որ այսօրվա արտը...

— Գիտեմ, Արամ,— միտքս հատկանալով ժպտաց նա։ Նրա ժպիտից լուսավորվեցի և ես։

— Ցտեսություն, ընկ. Գեղեցիկ, ես ուզում էի այսօրվանից ամեն ինչ ավելի լավ անել, և ամենալավը նկարել հենց այդ արտը։— Չգիտեմ, ներե՞ց ինձ կիսատ արտի համար, թե՞...

Բայց գիտեմ, որ այսօր ամենաշուտն եմ հասնելու տուն, պատմելու տխրությունս երկար դեմքիս պատճառով։

Ես չզգացի, որ բոլորովին մոռացել եմ աշակերտական կանոնների բոլոր կետերը, երբ ճեղքելով ուսուցիչների շղթան՝ դուրս փախա։

Բայց ես գիտեմ, որ ինչ-որ լավ ու տխուր բանից մղված ամենաշուտն այսօր եմ հասնելու տուն։ Տուն հասնելուն պես շնչասպառ ասելու եմ մայրիկին՝

— Աշխարհի ամենալավ բանը նկարելն է, Մարտի 8-ը, այսօրվա արտն ու ընկ. Գեղեցիկը։

Ասելու եմ, և փայլելու են մորս աչքերը, երբ հասկանալու է բոլորը։ Իսկ գլխավորն այն է, որ ես գիտեմ արտի, ցորենի, բարի սերմնացանի, Մարտի 8-ի ու կարմիր կոմբայնի մասին։

Եվ ինչ լավ է, որ ընկ. Գեղեցիկի աչքերի մեջ երևում է աշխարհը, իսկ մազերը սև ու հարդարած են։ Եվ ինչ լավ է, որ այսօր Մարտի 8-ն է, թեև չեմ վերջացրել հենց նոր ըս-

կրսած պատմվածքս, որքան էլ մայրիկը շտապեցնում է... իսկ աշխարհն ավելի է մեծացել աչքիս։

ԱՐԱՄ — Բարև, աշխարհ։

ԳԼՈՐՈՒՍ — Բարև, տղաս։

ԱՐԱՄ — Ի՞նչ ես մտածում։

ԳԼՈՐՈՒՍ — Ես մտածում եմ երկու փոքրիկների մասին, որոնք իմ մեջ խոսում էին, հետո լռեցին առհավետ։ Նրանց հայրենիքում կռիվ է, և ծայրը չի երևում։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԻ ԲՈՒՌ ՑՈՐԵՆ

Վիետնամցի փոքրիկները.

— Լսո՞ւմ ես։

— Չէ։

— Ականջ դիր։

— Փորձում են։

Զագարը, որի մեջ նստած էին՝ նեղ էր, և նրանք խոսում էին քիթ-քթի։

— Մրուտ ես։

— Ցորեն էի փնտրում։

— Գտա՞ր...

— Հիմա ինչ-որ տեղ տոննաներով ծովն են լցնում։ Նրանցից այն կողմ խանձված արտը մխում էր։

— Վախենո՞ւմ ես։

— Առաջ վախենում էի։

— Ես գիտեմ, որ վաղը չեմ լինի։
— Դու լինելուց ու չլինելուց քիչ բան ես հասկանում։
— Ես հասկանում եմ այն, որ մենք մեղք ենք։
— Ո՞վ, մենք։
— Ես, դու, նրանք, որ մեռան։
— Ա՜...
— Ուտել եմ ուզում։
— Գնանք։

— Կարծում ես մեջը բան կլինի՞...
— Ռումբեր չինում են, շոկոլադ էլ...
— Գնանք։
— Իսկ դու ճարպի՞կ ես։
— Երբ հրացաններ էի կրում, մի քեռի ինձ ասաց՝ ճստիկ։
Գնացին։ Սողալիս նրանց արմունկները մրմռում էին։
— Իսկ եթե պայթի՞...
— Երկու օր անցել է։
— Խցիկը չկա, երևի...
— Փորձենք։
— Իզուր է։
— Վախկոտ։
Նրանք այնքան նման էին, որ անուն չունեին։
— Դու մտիր, ես էլ կգամ։
Այրված ինքնաթիռի ծվենները խրվել էին խանձված հողի մեջ։
— Դուռը չի բացվում։
— Ա՛ռ, խփիր։
— Չեմ կարող։
— Եթե այսօր էլ ոչինչ չկերանք, ես բոզ կսպանեմ։
— Ոչինչ չի երևում։
— Սողա՛։
— Ես լսել եմ, որ օդաչուները վիսկի են ունենում։
— Ոչինչ չկա, միայն մեռած օդաչուն է։
— Դու մայր ունե՞ս...
— Ի՞նչ մայր։
— Այս օդաչուն էլ մայր ունի։
— Եթե ունենար, չէր դա։

— Գիշերն այստեղ կմնանք։
— Գիշերը ես կմեռնեմ։
— Չես մեռնի։
— Մի բուռ ցորենը հավասար է մահվան։
— Քանի՞ տարեկան ես։
— Երբ սկսվեց, տասը տարեկան էի։
Լսվեց ոռնոց, նրանք սսկվեցին։
— Վերջ։
— Չի խփի։
— Նրանք կիջնեն, կգան։
— Չեն գա, մի ջարդված ինքնաթիռը մեծ բան չէ։
— Պտտվում է, ճոճանակ է կախում։
— Վե՛րջ։
— Իշավ։
— Նա կստուգի միայն խցիկը։
— Նա կտեսնի մեզ։
— Չի տեսնի, մտիր ռումբի տեղը, ծպտուն մի՛ հանիր։
— Ձագարն ավելի ապահով էր։
— Կսպանի։
— Ի՞նչ...
— Ինձ։
Օդաչուն նայեց, պտտվեց, ձեռքը թափ տվեց։
— Ոչինչ չկա...
— Մահը աչքից է կախված։
— Թարձրանում է, ճոճվում է, կընկնի, կմեռնի։
— Չի ընկնի և չի մեռնի, նա կսպանի մեզ։
— Երանի հրացան լիներ։

— Հիմար, այս խանձված դաշտում երազում ես հրացան, որ կրակես։ Ես տասը հատը կտայի մի բուռ ցորենի։

Հետախույզ ինքնաթիռի անվրեպ կրակոցը ստիպեց, որ տղաները ստիպված չլինեն տասը հրացանը փոխել մի բուռ ցորենի հետ։

ԱՐԱՄ — Գլոբո՛ս, դու սիրտ չունես։

ԳԼՈԲՈՒՍ — Բոլոր սրտերն իմ մեջ են։

ԱՐԱՄ — Դու թողնում ես, որ սպանեն քո կյանքերը։

ԳԼՈԲՈՒՍ — Ծնունդով ու մահով եմ ես կոչվում աշխարհ։ Ես առանց մարդկանց սոսկ երկրադունդ էի։ Նրանք ինձ աշխարհ սարքեցին, ես նրանց հրամայել չեմ կարող։

ԱՐԱՄ — Այնուամենայնիվ, դու վախկոտ ես։

Հույսով եմ ամեն ինչ պարզ ու հասկանալի է, ինչը չեք հասկանում, մեր մեջ մնա, ես էլ շատ բան չեմ հասկանում. կարող եք գրել մեր հասցեով և ստանալ պատասխանը։ Հասցեն ինչպես միշտ՝ վերջում։

— Խոսի՛ր, Գլոբուս։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՆԱՍՏՅԱՆ

Ութ տարեկան եմ, և ձմեռը հաճելի է սահել սահնակով։ Մոտակա գետի սառույցը տեղ-տեղ ճեղքված է, երևում է մեղմիկ երգող ջուրը։ Ուզում եմ վերից վար նայել, բռնել արտացոլումս փախչող ջրի մեջ։ Երկու-երեք փոքր աղջիկ ու

մի քանի տղա՝ ահա մեր թաղի դպրոցականները։ Դպրոցից հետո մայրիկը թողնում է գնալ սահելու, զգուշացնելով՝

— Հեռու չգնա՛ս։

Ճամփա ենք ընկնում՝ հրելով ու դոփելով սառած գետինը։ Արդեն գետի ափին ենք, որ հեռու չէ մեր տնից։ Թվում է սահելուց լավ բան չկա՝ մեր սառած գետինն էլ մի անվերջ, մի փայլուն ճամփա է։

Դիմացից տղամարդու լայն քայլերով գալիս է Նաստյան՝ ուսափայտից կախված դատարկ դույլերը չխկչխկացնում են։ Մոտենում է ջուր վերցնելու։ Տղաները խոսքները մեկ արած գոռում են՝

— Նաստյա՛, Նաստյա՛, հո՛ւ...

Սուլում են, փախչում՝ կառչած սահնակներին։ Իսկ ես չեմ փախչում, Նաստյայից չեմ վախենում։ Նա մոտենում է ինձ, կոպիտ բռնում ձեռքս։ Ես միամիտ մատով ցույց եմ տալիս անցքի փախչող ջուրը, հանդարտվում է ձգված դեմքը։ Երևի կարծում է շար չեմ, որովհետև ժպտում է։ Նայում է ինձ ու թողնում ձեռքս, ցցնում նախ մեկ, ապա հաջորդ դույլը, հետո էլ նստեցնելով սահնակ՝ հրամայում է տղաներին, որ նորնոր մոտենում են հանգստացած՝

— Քաշեք։

Բաղմած սահնակին, երջանիկ կատվի պես ժպտում եմ։ Նաստյան էլ թվում է տատիկս է՝ հին ու բարի։ Հասնում ենք մեր տների մոտ, տղաները բաց թողնելով սահնակը ձգող պարանը՝ նորից սուլում ու կանչում են.

— Նաստյա՛, Նաստյա՛, հո՛ւ...

Նաստյան հետ է մնացել։ Ձեռքով եմ անում ու մտնում դարպասից։

Երշանկությունից ոչինչ չեմ հիշում, քնում եմ։ Առավոտ է, ճերմակ ձյունից գունատվել է արևը։ Տնից դուրս եմ գալիս։ Մայրիկը ինչպես միշտ՝ զգուշացնում է խելոք մնալ։ Գլխով եմ անում։

Անկյունում ինձ է սպասում Նաստյան։ Աչքերս պլպլում են։ Նա բարևում է կոտրած ժպիտով։ Խլեյով պայուսակը, մյուս ձեռքով էլ բռնելով ձեռքս՝ ինձ քարշ է տալիս դպրոց։ Անընդհատ վազում եմ, քայլելով նրան չեմ հասնում։ Դպրոցի մոտ տալիս է պայուսակը առանց որևէ խոսքի և ձեռքը շարժում, թե՝ գնա։

Գնում եմ։

Դասերից հետո նույն տեղում սպասում է, նորից վերցնում մեծ պայուսակս։ Ճանապարհվում ենք։ Հասնելով մեր տուն, նորից ձեռքով է անում, որ գնամ։ Եվ միշտ լուռ։ Հաջորդ առավոտյան արդեն գիտեմ, որ սպասում է, դասերից դուրս գալիս՝ նույնպես։ Ու քիչ-քիչ դա պահանջ է դառնում։

Ինչպես միշտ՝ տղաները դպրոցից դուրս գալիս բղավում են.

— Նաստյա՜, Նաստյա՜, հո՜ւ...

Ուզում եմ բողոքել, լաց լինել կողքից քայլող Նաստյայի համար, բայց նա այնքան մեծ է, որ ամաչում եմ։

Սեղմած շուրթերով ինձ տանում է իր հետ։

Մայրիկը տեսնելով մեզ միասին՝ վախենում է, շատ փոքր եմ Նաստյայի ամուր ոտքերի մոտ։ Ու այդպես, ամեն օր ու առանց խոսելու։ Կարիք էլ չի լինում։ Ամեն ինչ պարզ է։

Մեր ճամփով անցել ենք երկար, մինչև որ մեծացել եմ։

Մի օր էլ չեկավ՝ պայուսակս ծանր էր, կոշիկներս՝ ոնց

որ երկաթ։ «Ի՞նչ պետք է ասեմ մորը, եթե հարցնի, թե ո՞վ եմ, ի՞նչ եմ ուզում»,— այս մտքով հասա։

Մեր աունը նման է այն տանը, ոնց որ մի օր են ծնվել, միասին ապրելու համար։ Կին է դուրս գալիս իմ կանչի վրա, ուշադիր դիտելով գետնից կպած իմ հասակը՝ քմծիծաղում։ Պատասխանում է, որ էլ Նաստյան այնտեղ չէ, նրան վերցրել են բուժման։ Ասում է հանգիստ, անվրդով, շուրթն էլ չի դողում։ Երեի մայրը չէ, այլ հարևանը։ Ծպտուն չեմ հանում, միայն զգում եմ, որ կոկորդս խտուտ է գալիս։

Հիմա ես մեծ եմ, մեր գետն էլ անվերջանալի, փայլուն ճամփա չէ։ Նաստյայի դեմքն էլ աղոտվել է իմ հուշերում, մեր տներն էլ թվում է է՛լ նման չեն իրար։ Բարձրդասարանցի աշակերտ եմ։ Չգիտեմ ուր և ինչպես է իր կյանքն անցկացնում հեռավոր Նաստյան։ Հին օրերի պես ուզում եմ տեսնել նրան. ամեն առավոտ, երբ ուղևորվում եմ դպրոց և ամեն երեկո, երբ գալիս եմ տուն։ Այնպե՞ս եմ ուզում։

Էլ սահնակ չեմ խաղում փայլուն ճամփաներում։ Հիմա ամեն ինչ Ցին է դարձել, սահնակն էլ, ձեռքիս հաստափոր պայուսակն էլ, ամեն ինչ, նույնիսկ մեր սառած գետը։

Ու քանի գնում, ես ավելի եմ մոռանում իմ ով լինելը. ես նրանցից եմ երևի, որոնք չեն վախենում սառած ժպիտով թարևող մարդկանցից, ու այդ մարդիկ չեն ծեծում նրանց։ Երբ վախենում ես մարդուց, նոր է ծեծում, որ ցույց տա իր ուժը։ Ու կորած, մոռացված մի հուշ ինձ հանգիստ չի տալիս, թեև արդեն մեծ եմ ու այլ հուշեր են պատել ինձ. իսկական ճամփաների ու շիտակ ճամփորդների մասին։

Հիմա բոլոր հուշերն ինձ պատկերանում են փոքրիկ, ծրոմքուված սահնակի, անվերջ ու փայլուն ճամփի, հաստափոր

պայուսակի, ուսափայտից ճոճվող դույլերի տեսքով՝ ինչպես միշտ անցյալ ու նոր, միշտ հին ու ամենօրյա ՆԱՍՏՅԱՆ։

Ես չիմացա Նաստյայի մասին պատմող աղջկա անունը, բայց հաստատ գիտեմ, որ նունուշի քույրն է կամ քրոջ քույրը։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԱՅՐԻԿՆ ԱՍԱՑ՝ ԿՈՇԻԿՆԵՐԸ ՊԵՏՔ ՉԵՆ

Հիվանդանոցի հին դուռը հրելով՝ առաջ եկավ հայրիկը.

— Թո՛ղ, թո՛ղ կտրեն, միայն թե այս ցավից պրծնեմ,— ասաց նա հենակը գետին խփելով։

Ես հասկացա, որ շատ է մտածել ու տանջվել հայրիկը, երկու ամիս։ Մտածել է նաև իմ մասին։

Ես նայեցի դարպասին, որով ամեն օր գալիս ու գնում են հենակով ու անհենակ մարդիկ, հիվանդանոցի լուսամուտներին, աշխարհին, որ հիմա մոխրագույն էր։

Ես ուզեցի բռնել, խեղդել հիվանդանոցի բակի չալ կատվին, որ մռմռում էր ինքն իրեն։ Ուզեցի ծռել լուսամուտների երկաթե ձողերը։ Ուզեցի լռեր, անպայման լռեր այդ չալ կատուն։

— Հայրիկ, հայրիկ ջան, կատուն չալ է և մռմռում է ինքն իրեն։

Հայրիկը նայեց ու ժպտաց ինձ։

Բայց և այնպես՝ ես գիտեի, որ նրա ժպիտը ժպիտ չէ, և որ

վաղը սարսափելի օր է լինելու ինձ, հայրիկի, մայրիկի ու աշխարհի համար, կամ միայն մեզ համար։

— Հայրիկ, գիտես, ես վաղը պետք է արտասանեմ հավաքույթում։

— Դու լավ տղա ես,— պատասխանեց հայրիկը։

Հեռանալ չէի կարող, մնալ անհնար էր, ոտքերս չէին գնում, սիրտս ուզում էր փախչել, իսկ հիվանդանոցի լուսամուտի ձողերը սարսափելի կոպիտ ու հին էին։

— Հայրիկ, լուսամուտի ձողերը պետք է փոխել։

— Մորդ ասա, թող կոշիկներս բերի, երկոսն էլ։

Ես մի քիչ հետո հասկացա, որ նա հեշտ չի հրաժարվելու կոշիկի զույգից, որ նա կրծքին է սեղմերու կոշիկը, նույնիսկ պահելու է ծոցում։

— Հայրիկ, կենտն այնքան սարսափելի չէ, հայրիկ, թող մայրիկը բերի զույգ կոշիկները, որ ես արտասանեմ հավաքույթում։

Երևի ես նման չէի ինձ, որովհետև հայրիկն ասաց՝

— Լավ, պետք չէ, ասա. թող միայն ինքը գա, դու չգաս, կարտասանես։

Ես զգացի, որ վերջին անգամ եմ տեսնում նրա զույգ ոտքերը, ես ուզեցի ոտք դառնալ հորս համար։ Երբ նա ծածկվեց գունաթափ դռան հետևը, ես դուրս եկա՝ իմ հետևում թողնելով շալ, մոռացող կատվին, լուսամուտի կոպիտ ձողերը և մի զույգ հենակ։ Ես մտքումս կրկնում էի ոտանավորը, որ պետք է արտասանեի հավաքույթում։..

...Առանց կովի ես դպրոցում
Ինչպե՞ս դառնամ հայրենասեր։



Ոտանավորի հանկերի արանքից մենակ մի ոտք էր քայլում։

Ամայի մի փողոցում հաշվելով ասֆալտի դար ու փոսերը՝ կանգ առա։ Ես գծիկներ տեսա ինչ-որ բանի նման։ Մի կին կանգնեց ինձ մոտ և հետաքրքրությամբ նայեց։

— Ինչի՞ նման է գիծը,— հարցրի։

— Գիծ է, բալիկ ջան, սովորական գիծ,— ասաց այդ բարի ու միամիտ կինը։

— Ես վաղը նախքան արտասանելս կսպանեմ չալ կատվին,— ասացի՝ հրելով մի քար։

Գնացի՝ հիշելով հիվանդանոցի գունաթափ դուռը... սպիտակ խալաթներ ու գորշ երկինքը... որից մի պատառ շողք էր կախվել։ Հասա տուն, բացելով մեր դուռը, մայրիկին ասացի՝

— Մայրիկ, գիտե՞ս ասֆալտի գիծն ինչի նման էր։

— Չգիտեմ, տղաս։

— Հայրիկն ասաց՝ կոշիկներն է՛լ պետք չեն, մի՛ բեր։

Հետո լսվեց մի ճռռոց, մի թմփոց ,և ես սարսափելի մենակ զգացի աշխարհում։ Մինչև եկավ հարևանը, ջուր շփեց մայրիկի դեմքին... և մի քիչ փոխվեց ամեն ինչ։

Ես դեռ մտքիս մեջ կրկնում էի՝

...Լավ սովորիր, իմ թանկագին

— Ոչինչ, մեկ ոտքով էլ կարելի է քայլել, հողը չի ճոճվում, չի ընկնի,— ասաց մեր հարևանը։

Մայրիկը խմեց այն ջուրը, որ մեկնել էր հարևանը։ Հետո ոտքի ելավ։ Իսկ ես շարունակեցի մտքիս մեջ կրկնել ոտանավորի հանգերը՝

Երեկոյան աշխարհում դեռ վառվում էին նեոնե լույսերը։

ԱՐԱՄ — Ես տխրում և ուրախանում եմ քո պատմածներից։
ԳԼՈԲՈՒՍ — Մարդու համար երկուսն էլ անհրաժեշտ են։
ԱՐԱՄ — Բայց ես դեռ մարդ չեմ։
ԳԼՈԲՈՒՍ — Դու տղա ես, և պետք է մարդ դառնալը սովորես, ինչպես դասերդ։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՈՒԹՆԵՐՈՐԴ

ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄ ԴԱՍԸ՝ ՊԱՏԱՆԻ ԾԱՂԿՈՂԻ ՄԱՍԻՆ

Ասեին ամենալավ բանն ինչն է·
— Գյուղամեջը։
Ամենախելոք մա՞րդը...
— Աբուն։
Ամենասիրո՞ւնը...
— Թենին։

Գյուղը կանաչ էր գարնանը, ձոր ու կածան ծաղկած-ծաղկունք։ Թորիկը արմտիք էր հավաքում, իսկ Աբուն եփում էր, Թորիկը այդ ներկերով նկարում էր։ Աշնանը արևը կախվում էր քարափի գլխին ու քարափի տակ փշրվում՝ ստեղծելով արևային ծառեր, արևային կածան, արևային մամուռ. ու ձորի ջրի մեջ՝ արևի հոսող փշուրները։

Տխրում էր տղան և երազները հաշվելով չոր ծառերից մեկիկ-մեկիկ կտրում էր ցախ, ճրթոցը արձագանքվում էր ձորեզրին, ու մի շշկլած հավք թաքցնում էր երգը... հետո երգն ու ճրթոցը միացած՝ համերգում էին։ Նա մի լաճ, անուն Թորիկ՝ գրկաչափ ցախը պարանով կապել-սնդացնելիս ակամայ դնում էր

գետնին. գույները աչքին նախշեր էին դառնում, անտառի երգը՝ հողի երգ։ Հետո մի կոտրած ցայլ սեղմում էր դողացող ավի մեջ և սրտի հեքը բռնած՝ խշխշան խոտերի մեջ գծեր էր քաշում։ Գծերը խաչվում էին, հետո դառնում թռչուններ ու հեքիաթի վիշապ։ Իսկ հողը տերևների տակից խոնավություն էր բուրում։

Տղան նայում էր իր նախշած գետնին, նայում էր հեռու և արևը ցախի հետ շալակած բերում էր իրենց կտրավոր գետնատունը։ Մայր Թենին թեշիկը ձեռքին մանում էր. թեշիկը կյանքի պես հին էր, տատի տատինը՝ ճաքի վրա թելը պահում էր։

Արևից հյուսված, արևի ճոճից կախվել էր զանգակավոր վանքը։ Վանքի խորաններում չնարակած հրեշտակները ժպտում էին կուլ գնացող աչքերով։

Թորին՝ պատանի, լուսաչք, տրեխների ծոպերը պինդ, ծայրերին մոռացված հող ու տերև, ուսնգների մեջ խոնավության բույրը։

Տղան նայեց, նորից հիշեց աստվածամորն ու իրեն թափ տալով գնաց։ Խնկահոտը լիզում էր վանքի կողերը։

Թորոսը ներս մտավ՝ մտքերը թափ տալով ու գլխից քաշելով «մոթալ» փափախը։

— Ես եմ, Սրո՛։

— Նստի՛ր, գիր արա։

Սև տքեմը շատ էր սազում հորը։ Թորոսը նստեց խորանի մոմերի առաջ, տեսավ քարե նախշերը, օրորվող մոմալույսի տակ փետուրը ձեռքն առավ, թաթախեց թզենու կաթի մեջ, մագաղաթի շուշանափայլ երեսը գունազարդեց։ Խնկահոտի մեջ խնկարկվում էին գրերն ու աստվածամոր խորհող դեմ-

բրլ Ասուվածամոր հոնքերի պես կեռ, աչքերի պես գոչավոր, ասուվածամոր քթի պես ուղիղ, ասուվածամոր շուրթերի պես բարի ու ասուվածամոր մատների պես նուրբ՝ շարվում էին ասաները իրար կողքի, իրար տակ ու իրարից հեռու։

— Հերիք, լա՛ռ,— գլխից վեր հնչեց մի ձայն։

Աբուի աչքերից մոմի լույսի մեջ արևի խրձեր էին թափվում։

— Գնանք։

Աշունը խլպլտում էր մառաններում, աշունը հևում էր կարասների մեջ և կոչում էր կյանքի։ Թորոսի աչքին ամեն ինչ նախշ էր թվում, որ ձուլվում, վերջանում էր ձորապանկին։ Հենկահոտի ու մոմալույսի տակ աշխարհը դառնում էր կիսաթափանց քող, քողի վրա՝ նախշ ու բան։ Իսկ երբ դուրս էր գալիս վանքից և քողը ընկնում էր՝ աշխարհը երփներանգ կորգ էր, մեջտեղը ասուվածամոր աչքերով Թենին, Թեշիկը ձեռքին՝ ժպտացող ու քարի։

Թենին մայր, Թենին կին, Թենին սուրբ։

Թորոսը ամենաշատը ճանաչեց մոր սրբությունը, որդան կապմիրով ծածկեց գիր ու մատյան և երբ դարձավ վանքի միակ ու հայտնի գրիչն ու ծաղկողը, օշարակով մոր շիրմաքարին գրեց՝

«ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՍՈՒՐԲ ԹԵՆԻՆ»։

ԱՐԱՄ — Գլոբուս, քանի՞ գիծ ունես։

ԳԼՈԲՈՒՍ — Չեմ հաշվել, որովհետև նրանք, ճանապարհներ են, սահմաններ, գետեր։ Ես գծեր շատ եմ հարգում, այնպես, ինչպես ինքս ինձ։

ԱՐԱՄ — Ես նկարչության դասին չկարողացա հարգել գծերի ուղղությունը և ուրիշ...

ԳԼՈԲՈՒՍ — Վերջևրս...

ԱԲԱՄ — Միայն ֆուտբոլի պատճառով։

ԳԼՈԲՈՒՍ — Լավ չէ, բայց ամենակարևորն այդ չէ։

ԱԲԱՄ — Իսկ ի՞նչն է կարևորը։

ԳԼՈԲՈՒՍ — Բարեկամությունը։

ԱԲԱՄ — Չհասկացա։

ԳԼՈԲՈՒՍ — Երկրագունդ կար քարից ու սարից։ Ադամն ու Եվան բարեկամացան, ծնվեցին երեխաներ։ Երեխաները մեծացան։ Էլի ծնվեցին, էլի բարեկամացան։ Հետո մոռացած բարեկամությունը՝ սկսեցին իրար հրմշտել։ Բայց եթե ճիշտ դատենք, աշխարհում բոլորը բոլորին բարեկամ են։

ԱԲԱՄ — Նման մի բան մայրս է պատմել, երբ շատ փոքր էի և կռվում էի նունուշի հետ։

Գլոբուսը մի օր ասաց. կյանքում այն, ինչ էական ու կարևոր է, ամեն տեղ նույնն է, տարբեր են միայն գույները։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԻՆՆԵՐՈՐԴ

ՇՈՒԿԱՅԻՑ ՀԵՏՈ ՀԱՆԳԻՍՏ Է ՊԵՏՔ

Հասանք մի աղմկոտ տեղ, ուր հրում ու կանչում էին, փոշի էր ծանրացել մարդկանց թարթիչներին։

— Մայրիկ, ինչո՞ւ են հավաքվել։

— Շուկա է։

«Ուրեմն աշխարհի որ մասում հավաքվում են, աղմկում, շուկա է»։

— Մայրիկ, ինչո՞ւ ես ինձ կպչում։

— Որովհետև ինձ էլ ուրիշներն են հրում։

«Ուրեմն ում հրում են, նա էլ պետք է մյուսին հրի»։

— Մայրիկ, իսկ ինչու այն կարմիր խնձորները չես գնում։

— Թանկ է, բոնիր փեշիցս, չկորչես։

«Ուրեմն ինչ թանկ է, մեր բանը չէ, և եթե չբռնեմ, անպայման կկորչեմ»։ Ես դադարում եմ մրգերին նայելուց, որ բազմել են շուկայի բոլոր սեղաններին, ոնց որ թանգարանում։ Մտածում եմ գնելու, վաճառելու թանկ ու էժանի և այն մասին, որ պետք է շատ բան փոխել։ Մտածում եմ հրելու, թարթիչներին նստած փոշու և թանկ խնձորների մասին։

Մայրիկը կաղամբ է գնում, պղպեղ, կանաչի։

— Մայրիկ, ինչո՞ւ կլորը գնեցիր։

— Սուրը կծու է։

Ականջներս անսովոր աղմուկից հոգնեցին, ես էլ, որովհետև առողջանալուց հետո առաջին անգամ եմ այդքան մարդ տեսնում, որոնց թարթիչներին մեղմ ձյան տեղ փոշի էր բազմել։ Այդքան խնձորներ, որոնք թանկ են, աղմկողներ, որոնք առնում ու տալիս են։ Հրվողներ, որոնք ստիպված են ուրիշներին հրելու։

Խորհելով այդ մասին՝ հազիվ էի հասնում մայրիկին։ Ես մոտենալով կառչել էի կաղամբով ու կանաչիով լի պայուսակից և աշխատում էի ետ չմնալ։ Իսկ մայրիկը չէր էլ մտածում փոշուց ծանրացած կոպերի մասին, այլ պարզապես ուզում էր շուտ հասնել տուն, ճաշ եփել։ Հայրիկի հիվանդանալուց հետո մայրիկը ժամանակ չունի մտածելու առաջ շարժվող մարդկանց մասին՝ եփելն էլ մայրիկի շարժումն է։

— Ջե՞ս հոգնել։

— Դու հոգնե՞լ ես,— հարցիս հարցով պատասխանում է մայրիկը։

— Պետք է հասնել,— ավելացնում եմ։

Պետք է հասնել։

Տարօրինակ կերպով նորից եմ մտածում քայլելու, շուշանալու, շուկայի պես կոտակված մարդկանց ու հրողների մասին։ Մտածում եմ աղմուկի մասին. ինձ թվում է շատ մարդիկ կան, որոնք աղմկում են, որոնք հրում են, որոնք խանգարում են երթևեկությանը, որոնք թանկ խնձորներ են վաճառում։

— Մայրիկ,— բղավում եմ։

— Ի՞նչ, Արամ ջան,— զարմանում է մայրիկս։

Լռում եմ։

Ցուրտ է փողոցում, և մենք շտապում ենք։

— Հասանք,— ասաց մայրիկը։

— Քաղցած եմ, մայրիկ։

— Մարդ շուկայում հոգնում է, տանը կհանգստանաս,— ասաց մայրիկը։

Երկար ժամանակ ես տարված էի շախմատով՝ թագավոր, ձի բառերը գլխիցս դուրս չէին գալիս։ Ես թողել էի ֆուտբոլը, նկարելը և կարգին սովորելը։

— Տղաս, ամեն ինչ լավ է, բացի հիմնականից։

— Ի՞նչն է հիմնականը, մայրիկ։

— Կարգին սովորելը։

— Մայրիկ, ես միայն սովորելով եմ զբաղված։

— Կարգին մարդ դառնալու համար հարկավոր է մի քիչ թվաբանություն, մի քիչ նկար, մի քիչ էլ երգ ու լեզու իմանալ։

Դե ես մի քիչ կմտեմ ամեն ինչից։

Իմ ամենամեծ բարեկամը Մայրիկն է, իսկ ամենամեծ ընկերը՝ Գլուխսը։ Եվ ես նրանցից պակաս չեմ գա, մինչև չիմանամ ամեն ինչ։

ՊԼՈՒԽՈՒՆ Ամեն ինչ երբեք չես իմանա։

ԱՐԱՄ Դե՛, ինչքան որ հասցնեմ։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆՍ

Ես ծառերը հաշվելով էի գնում, իսկ տատս տարիների ընթացքում հաշվել էր երևում էր մի ճամփա, մեկ էլ ցորենի արտ։ Այդ ճամփով համարյա ամեն օր ուղիղ գնում, այդ ճամփով ես լինք գալիս ես ու տատիկը։ Ետ էինք գալիս, նստում ճամփեզրի վերջին ծառի տակ, որի մոտ աղբյուր կար, մեկ էլ քարե նստարան։ Տատս իջեցնում էր ուսի ծանրոցը, մի կույտ խոտում, հետո էլ աչքերը հառում արտեզրին Հոգված հորիզոնին։

— Անմահական է,— ասում էր։

Ես չգիտեի՝ ջո՞ւրը, ծա՞ռը, ճամփա՞ն, թե ա՞ստը։

Ես նայում էի տատիս կնճռոտված ձեռքերին, ճամփեզրի այդ վերջին ծառին, որի տակ աղբյուր կար, մեկ էլ քարե նստարան, և այդին նստած տատս կարող էր ժամերով խորհել։ Տատիս ձեռքերը նման էին արմատները բաց այդ ծառին, որն ամուր գրկել էր հողը, քարը, ջուրը։

— Ինչո՞ւ է ծառը մենակ, տատի։

— Մենակ չէ, բալա՛ս, նստարան կա, դիմացը ցորենի արտ, որի սիրուց կանաչում, ջահելանում է ամեն գարնան։

Բայց և այնպես ես գիտեմ, որ ծառը շուտով լրիվ կչորանա, մինչև կգա մի մարդ, վառելիքի համար կտանի։

Մենք համարյա ամեն օր հանդ էինք գնում, քաղում էինք սարի կանաչի, կեսը մենք էինք ուտում, կեսն էլ տանում, վաճառում էինք կապոցներով։ Առավոտ ծեգին արևի շողերի հետ տնից դուրս գալիս, իրիկունը շողերի փախուստի հետ լիքը շալակով ետ էինք գալիս։ Տատս տնքում էր բեռի տակ։

— Չհասա՞նք...— ասում էր կեսճամփին։

Տատիս խղճում էի և ուզում էի շգնալ այդ ճամփով, որը երկարում, երկարում, մեզ շուկա էր տանում՝ ինձ, տատիս, մեկ էլ կապոցով սարի կանաչին։

— Տատի՛, այս ճամփից զզվել եմ։

— Էս ճամփեն մեր պապերն են գցել, տղաս,— ասում էր տատս, ու նստում արտեզրին՝ ցորենի ծփանքը շոյում էր մազերը։

— Տատի՛, մի քիչ ցորեն չխանձե՞նք...,— հասկերից հոտ քաշելով ասում էի ես։ Տատս խորամանկ ժպտում էր։

Ես ուրախ-ուրախ պոկոտում էի մի երկու բուռ ցորեն, տատս խանձում էր ճամփեզրին նստած, վերջին հատիկ լուցկիով։

Ես նայում էի խանձվող ցորենին ու՝

— Տատի՛, շատ ես պառավել։

Ագնիվ խոսք, ես չէի հասկանում, որ դրանից վիրավորվում է իմ քարի տատը, նա դադարում էր խանձել խուրձը՝ մինչև հասկի ցորենն էլ այրվում էր՝ մի քիչ այրելով տատիս մատները։

— Պառավել եմ, տղա՛ս, այրվել եմ այս ցորենի պես։

Քթի տակ ինչ-որ մոռացված եղանակ դնդնալով, հանդիմանանքով շարժելով գլուխը՝ հատիկները բացում էր բռի մեջ, թեփը փչում, ցորենը լցնում իմ պարզած ափը։ Նա նայում էր ինձ, խանձված հատիկներին, ու դողում էր ձեռքը։

— Տատի՛, ինչո՞ւ այս ճամփան շուկա է տանում, գյուղից քաղաք։

Տատս մտածում էր, որ հորիներ արտասովոր մի պատմություն, իսկ հեռվից հանդարտ, փոշու հետ խաղալով՝ գալիս էին մի փոքրիկ ավանակ, մեկ էլ ածդահա մի ծերուկ։ Մարդը նստած էր կենդանու վրա, իսկ ոտքերը անտարբեր հետքեր էին թողնում ճամփի փոշու մեջ։

Մոռացած խանձած ցորենը, արտն ու ծառը՝ ես հարցնում էի.

— Տատի, բա մեղք չէ՞...

Ծերուկն ու ավանակը մոտենում էին, ծերուկը. չիբուխը հանում էր բերանից ու գոռում.

— Էդ ի՞նչ եք անում, բա ամոթ չէ՞...

Ես չէի հասկանում, թե ինչն է ամոթ։

Տատիս կնճռոտված ձեռքերը դողում էին ու թափում էր բռի վերջին ցորենը, որ կորչում էր ճամփեզրի փոշու մեջ։

— Փնթփնթան ծերուկ,— ասում էր տեղից բարձրանալով,— գնանք, բալաս...

Հեռանում էինք, իսկ առանց մեզ մնացած ցորենի արտը ծփում էր ինքն իր ու աշխարհի համար։

Ավանակը չէր գոռում, ծերուկը շարունակում էր փնթփնթալ.

— Հազար անգամ ասել եմ...

Խռված գնում էինք։

— Տատի, ինչո՞ւ էր ծերությունը...

— Ամենակներին հեծնում են, թալաս, նրանք էլ հողին են նայում, որ գտնեն ճշմարտությունը։ Ու դեռ չեն գտել, որովհետև հողը գաղտնիքներ ունի։

Աշխարհը լիքն է տատիկներով, ցորենի ծփացող արտերով, երգող ջրերով ու ցորենի հատիկներով, որոնք աճում են հողում, այնտեղ էլ մեռնելու համար։

«Աշխարհը նման չէ ցորենի հատիկին, տատիկ, և շատ փոքր է մարդու համար,— տատիս շիրիմի փոշին մաքրելով մտքում եմ անում»։

Իսկ այն ժամանակ չգիտեի, որ մեր թաղի խնձորը, կյանքը, ցորենի հատիկը համարյա կլոր են, և համարյա բոլորի մեջ գոնե մի կտոր արև կա։

* * *

ԱՐԱՄ — Գլոբո՛ւս, բարեկամ, դու փոքր ես մարդու համար։

ԳԼՈԲՈՒՍ — Ես հող ունեմ, որ մարդու ոտք չի կպել։

ԱՐԱՄ — Գլոբուս, սիրելիս, ես կարոտել եմ գյուղը, ես ուզում եմ լսել մի փոքրիկ աղջկի, որ ապրում է գյուղում, նա իմ մորաքրոջ աղջիկն է։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ԱՐԱՅԻԿԸ

— Շո՛ւտ արա, հորթը տա՛ր, մեղք է։

Քնաթաթախ հասնում եմ շորերս՝ բարձրաձայն անիծելով բոլոր հորթերին ու կանաչ մարգագետիններին։

Բոբիկ ոտքերով, Ջալիկին գցած իմ առաջ՝ նեղլիկ, կանաչ կածանով գնում ենք։ Նստում եմ կանաչ հողամբին, մտա-

ծում եմ բոլոր կանաչ թմբերի ու փոսերի մասին, որոնք երբեմն կլցվեն։ Ուրեմն այնքան են տաքանում, որ մոքերս մոռանալով՝ հանուցիից քունս տանում է։ Ինձնից մտածում եմ աշխարհի մասին, որն այնքան տաք ու փոքր է՝ մեր տան ու դպրոցի պես։ Մտածում եմ բոլոր Արայիկների ու Զալիկների մասին, որոնք ցողաթաթախ քայլում են մարգագետնով։

Հետո շոյում եմ Զալիկի փայլուն մազերը, զգուշացնում, որ շատ արածի և քթիս տակ երգում եմ՝

— Թյո՜ւ, փուշ է, անիծված...

— Արայիկ ջան, շո՛ւտ արա, ճաշը սառավ։

— Սառավ, սառավ, հիմա էլ սառած կուտեմ։

— Արայիկ ջան դասերդ մնացին։

Ուսելուց հետո մոռանում եմ, որ աշխարհում փշեր կան։ Դիրք կարդալիս հանկարծ աչքովս են ընկնում մայրիկի արծաթված մազերը...

Մեր թաղում մեկ էլ սպիտակ են Փառանձեմ տատիկի մազերը, որի փոքր աղջկա տարիքին է մայրիկը։

— Արայիկ ջան, շո՛ւտ արա, ուշացանք։

Ձեռք-ձեռքի տված ընկնում ենք մեր ճամփան, ուր տարին բոլոր ցեխ է. կարծում եմ միասին դեռ շատ կքայլենք՝ մինչև ցեխը չորանա։ Դպրոցը փայլում է արևի շողերից, կարծես սեմենացաներ լույս է ցանել կոմինդրե տանիքին։

Ես մտնում եմ դասարան, իսկ մայրիկը ուսուցչանոց։ Հետո դպրոցական զանգը՝ կախարդական սուլոցի պես...

Ներս է մտնում բոլորի համար ընկեր, իսկ ինձ համար ճերմակ մազերով մայրիկը։ Ես մայրիկին երբեք ընկեր Ատալիկ չեմ ասել։

Որքան շատ եմ լսում դասը, այնքան ավելի եմ հասկանում, թե ինչու են ճերմակել մազերը։

— Արայիկ ջան, գնա՛ տուն, Զալիկին կբերես, ճուտիկներին կուտ կտաս, վառարանը կվառես՝ մինչև տեսրերն ուղղեմ ու գամ։

Դեռ լավ է, որ Զալիկը չի փախել, կուշտ կերել է։ Թոկից բռնած, մեջքը շոյելով՝ բերում եմ։

Ասում են իմ տարիքի մի աղջիկ տեսնում է պատից այն կողմ և կարդում այնտեղ գրված ամեն ինչ, ա՛յ, մարդ եմ ասել, իսկ ես մի հասարակ կոճի խաղալու մեջ էլ վարպետ չեմ։

Երբ կոճին ուզում եմ գցել, հեռվում երևում է մայրիկը։ Ես վազում եմ տուն։ Գնում եմ, որ իմ պատճառով էլ չսպիտակի մի մազը։

Մտնելով տուն, հոգնած ասում է՝ բալիկ ջան, թեյը տա՞ք է։

Բացելով տաք թեյամանի կափարիչը, ժպտում է։

«Մեծանամ, անպայման բժիշկ կդառնամ, որ դեղ հնարեմ, այնպիսի մի դեղ, որ մազերը չսպիտակեն»։

Երբ այդ ասում եմ, մայրիկը ծիծաղում է։

Իսկ ես այնպես եմ ուզում շուտ մեծանալ...

Մի օր էլ, երբ Զալիկին բերում էի տուն, ուտքս դեմ առավ մի փայլուն բանի, վերցրի և ի՞նչ...

Թարիսման, այսինքն իմ լեզվով՝ բախտ։ Այ, ես հիմա ցույց կտամ Շալիկին ու Վալիկին՝ նրանք շատ են պարծենում իրենց կոճիներով։

Մտածեցի ու գնացի։

— Էդ ինչ է որ, մաման դրանից լավն ունի,— ասաց Վալիկը փայլեցնելով մկան աչքերը։ Շալիկը նախանձոտ նայեց ու լռեց։

Շատախոս Վալիկի ու լռակյաց Շալիկի մոտից հեռացա այնպիսի մի քայլվածքով, որ կարծես բախտ էի տանում իմ փոքրիկ գրպանով։ Մայրիկը տեսավ նոր գտած թալիսմանը։

— Ո՞վ տվեց...

Ես չհասկացա ինչ է կատարվում։ Տեսնելով մայրիկի գունատ ու դողացող ձեռքերը՝ դուռը բաց արի և ոչինչ չհասկանալով՝ շպրտեցի այն։

— Մենք ուրիշ թալիսման կգնենք։

Ուզեցի գլխով անել, բայց ինձ թվաց՝ ես կորցրել եմ իմ նոր գտած ու իսկական բախտի կետը։

Ես պատրաստ էի իմ փոքրիկ ուժով ջարդելու անփութորեն կորցնողի գլուխը։ Այդ մատին ուզում էի գոռալ, ուզում էի իմանա մայրիկը, բայց էլի լռում էի. ամենակարևոր տեղերում ես Վալիկի նման միշտ լռում եմ։ Պառկում եմ քնելու՝ կորած ու կորչող թալիսմանները ծաղրանքով ծրոմրռվում են իմ առաջ։

«Սպասեք, առավոտյան կարթնանամ, ցույց կտամ բոլորիդ,— ձեռք եմ թափ տալիս անտեսանելի թշնամիներիս,— ցույց կտամ անփութորեն նետած թալիսմանների, սպիտակած մազերի ու փուչ մտած ոտքերիս համար, կտեսնե՞ք...»

Ապրես, Արայիկ, դու նման չես Բենոյին, դու իսկական իմ մորաքրոջ տղան ես։

ԱՐԱՄ — Տեսնո՞ւմ ես։

ԳԼՈԲՈՒՍ — Տեսա՛։

ԱՐԱՄ — Ես ուզում եմ Արայիկին երջանկացնես։

ԳԼՈԲՈՒՍ — Ես չեմ տնօրինում մարդկային երջանկությունը։ Երեկո է. մի տեսակ հոգնած ու մտազբաղ եմ։

ԳԼՈԲՈՒՍ — Ինչո՞ւ ես կտկտացնում, քանի՞ անգամ եմ ասել։

ԱՐԱՄ — Իսկ ի՞նչ անեմ։

Գլոբուսը ներողամտորեն ժպտում է։

ԳԼՈԲՈՒՍ — Լա՛վ, զրուցիր։

ԱՐԱՄ — Դու ուրա՞խ ես իմ բարեկամությամբ։

ԳԼՈԲՈՒՍ — Եթե մորաքույրդ ինձ չբերեր տուն, ես անգործությունից չգիտեմ ինչ կանեի... Ես երախտապարտ եմ քեզ։

ԱՐԱՄ — Դե լավ, մի՛ացիր, Արայիկը թող մի քիչ էլ պատմի իր կյանքից։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԷԼԻԶԸ

— Գործ ասողը չի մրսի,— ասում է մայրիկն ու գնում բոստան։

Ես տխրում եմ, և իմ ձեռքից մեկ-մեկ ընկնում են քարկըտիկի քարերը։

Իմ ոտքերն սառուր են. գյուղում քայլելուց կարող են մրրցանակ շահել։

Էլիզը փոքր աղջիկ է, քարածերպերին է մեծացել, խմել

Քեշրղանի ջրից ու ճկուն է քարայծի պես։ Ես նրա մասին հակառակ կարծիքին կլինեի, եթե նա լորտու չբռներ։ Հիմա տխուր եմ, որովհետև էլիզը հաղթել է ինձ, բռնել է լորտու, լեզու ցույց տալով գնացել է լայն-լայն՝ փեշերի հետ խաղացնելով լորտուի պոչը։ Այս քանի օրն էլ խնձոր չի բերում իրենց այգուց, ասում է՝ խակ է։

Բոստանից գալիս է մայրիկը, նրա ոտքերը հողոտ են, բուկլից է արել։

— Ինչո՞ւ ես տխրել,— հարցնում է։

Հոգնած է, հոգատար հարցը նեղացած է հնչում։

— Էլիզն ինձնից շուտ բռնեց լորտու,— միանգամից ասում եմ ես։

Ասելուց հետո ինձ թվում է՝ մի հեկտար բուկլից եմ պրել։

— Երբ լորտուն թպրտում էր էլիզի բռի մեջ, ես ուզում էի ծեծել նրան։

Էլիզն ու ես հողի պես ենք բարևում ծեգը բացվելիս, այսինքն լուռ։

— Ամեն օր, ուր էլ գնամ, էլիզը պարծենում է։

— Մեծ տղա ես, ընկել ես լորտուների հետևից,— հանդիմանում է մայրիկը։

— Որովհետև լորտուն օձ է, բայց թույն չունի, էլիզից բարի է,— արդարանում եմ ես։

Ուզում եմ ասել հարցը լորտու բռնելու մեջ չէ...

— Լավ, էլիզին կասեմ հետդ ընկերություն անի։

Մայրիկը գնում է, իսկ հետը բերած բոստանի անուշ հոտը մնում է ինձ մոտ։

Ծաղկած կարտոֆիլին նայելով, ուզում եմ կանչել՝

— Բուկլիցն ուշացել է...

4 Գլխուսն ու ոտաց

Ձեմ կանչում, մտածում եմ, տեսնում եմ արևոտ մի աշխարհ, գյուղը բլրի վրա, ներքևում մի լիճ, նավակ կա լճի մեջ, եղեգներ, բլրի մյուս կողմում ոչխարի հոտն է արածում՝ բամբակից ճերմակ են, իսկ ոտոտու չկա քարերի մեջ։ Էլիզը նստած է բլրի գլխին։ Ես հուզված մոտենում եմ, ձեռքիս ճերմակ մեխակը մեկնում նրան, ափիս մեջ մեխակից արև է ծնվում։ Երբ Էլիզը նայում է՝ աչքերի մեջ փայլփլում է իմ ափի արևը։

— Վերցրու, քեզ համար եմ բերել,— ասում եմ։

Հրաշքի պես մի մեծ, մի կլոր արև ճոճվում է գյուղի գլխին։

— Ես կշորացնեմ խոնավ հողը,— ասում է արևը։

Կարմրում եմ Էլիզին ատելու համար։ Ձեռք-ձեռքի տված մենք գիտենք՝ արևը երբեք չի խաբի՝ նա տաք է, կլոր ու քարի։

Անձրևից տիտավված նայում եմ իմ ձեռքին, ու Էլիզի մատների տեղ թորխի պոչն եմ տեսնում բռիս մեջ։

Իսկ գլխավերևս միալա՜ր, մշտակա՜ն... անձրևը։

Ականջներիս մեջ մայրիկի խոսքերը՝ գործ անողը չի մրսի։

Անձրևը կտրվում է, և ծիածանը պսակ է կազմում գյուղի գլխին, մխիթարում է։

Ես հաստատ քայլերով գնում եմ դեպի կարտոֆիլները։

Ու երբ հողի մեջ մեռնում է անձրևի վերջին կաթիլը, իմ ձեռքի թորխը թաց հողից չի ծանրանում բռունցից անելիս։

ԳԼՈԲՈՒՍ — Իսկ դու կարո՞ղ ես բռունցից անել։

ԱՌԱՄ — Չփորձեցի, քաղաք եկանք։

ԳԼՈԲՈՒՍ — Լավ գործերը հարկավոր է փորձել։

Ամեն օր խանութից մածուն եմ գնում և ամեն օր քսիրելով ուտում։

Սեթն ու Բենոն ֆուտբոլիստ են ուզում դառնալ և ֆուտբոլի պատճառով կռվել են։

Ես ու Գլորուսը համբերատար ենք, բոլորի պատմությունն էլ լսում ենք։ Ու ես փոխում եմ իմ բոլոր ձգտումները։ Ես ուրիշ եմ ուզում դառնալ։

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԱՍՆԵՐԵՔՈՐՈՐԴ

ԹԵԵՎ ՁՅՈՒՆԸ ԿՈՇՏ ԿՐՈՒՆԿՆԵՐ Է ԴԱՌՆՈՒՄ
ՈՏՔԵՐԻՍ ՏԱԿ

Փոքրիկ աղջիկը ծաղիկը տարավ բեմ, երաժիշտ Կարիկը շվոթվեց ու մեջքով կանգնեց դեպի դահլիճ։ Նա վերցրեց ծաղիկն ու... այդ օրվանից որոշեցի Կարիկի պես ժպտալ։ Եվ նույնիսկ շնորհակալություն էի ասում ամեն ոտքս տրորողի, իսկ նրանք շշմած նայում էին։ Հետո որոշեցի արտիստ դառնալ՝ չնայած այդ ոչ մի կապ չուներ ոտք տրորելու հետ։ Ես թատերական խումբ գրվեցի, անսպասման ուղում էի խաղալ «Ռոմանտիկները» պիեսում։

— Դու շատ բան ես ուզում,— ասաց Գևորը՝ մատը դնելով քթին։ Արդեն մեկ տարի էր նա այդ խմբի անդամ էր և ինձ նայում էր մեծ դերասանի պես։

— Դու նստիր, տղաս,— արևոտ մի օր ասաց թատերական խմբի դասատուն։ Այդ օրը ես նստեցի, ահա այսպես, և նստած եմ։

Այս երեք ամիսների ընթացքում ես հասցրի նայել բոլորին, և տեսա, որ Վոլոդյան բարձրահասակ է և ամեն ինչ բարձրաձայն է անում, համարյա գոռալով, Անժիկը ուզում է տպավորություն թողնելու համար ձայնը կեղծել, թեև Լենայի աչքերը գեղեցիկ են, բայց միշտ երգե-

լով է ասում ամեն ինչ, իսկ Ժիրիկը... Ժիրիկի մասին լռում եմ։ Ես պարզապես նրա ամեն մի շարժումից փշաքաղվում եմ, թեև դասատուն արգելել է՝ լարվածություն պետք չէ դերասանին, ասելով։ Ես չգիտեմ ու՞մ, և ինչո՞ւ... բայց հաստատ գիտեմ, որ ատում եմ, և մի օր այդ մասին կպատմեմ բոլորին։ Ես տանել չեմ կարող «պատանի» և «սկսնակ» բառերը։ Իմ ինչ գործն է, թե աշխարհում շատ մեծ դերասաններ կան, ու ես ոչ մի օր էլ նրանց չեմ հասնի։ Թատերական խմբի դասատուն ինձ ասում է՝ մի օր դերասան կդառնաս, որովհետև սրտումդ էլ կա, գլխումդ էլ։ Իսկ ես գիտեմ, որ չեմ դառնա։ Նստած տեղս այնքան նայեցի Գևորին, որ հիվանդացավ։ Որպեսզի հիմարություն չանեմ, ու գնամ նրան տեսության՝ գնացի թատրոն։ Թատրոն գնում եմ այն օրերին, երբ սիրտս նեղվում է. համարյա ուրախ էի, որ Գևորը հիվանդ է, և որ վորձը հենց այսօր են հետաձգել։ Խաղում էին «Սրտի արատ»։ Ես ոչ մի անգամ չեմ հաշտվում այն մտքի հետ, որ խելոք, տարիքով մարդիկ կարող են այդպիսի բաներ խաղալ։ Իմ սրտի հետ չէր բռնում նրանց սրտի արատը։

Եթե կյանքում ինձ հաջողվի դերասան դառնալ, ինչպես հավատացնում է մեր դասատուն, ես որոշել եմ այդպիսի դերեր չխաղալ։ Ես որպես պատանի և սկսնակ դերասան, ուզում եմ, որ բոլոր թատերական խմբերի դասատուները հաշվի առնեն նույն դերը կատարող երկու դերասանին էլ։ Ես ուզում եմ, որ բոլոր խմբերի խաղացանկից հանվեն «Սրտի արատի» պես պիեսները։

Ես քայլում ու մտածում էի ասողների մասին, ամենաշատը իմ ասողի, որ եթե կախվի երկնքից, ես մեծ դերասան

կդառնամ ժերար Ֆիլիպի, Օլիվիեի պես։ Ես գիտեմ, ինձ նրման շատ տղաներ կան, որոնք ուզում են լավ մարդ դառնալ, բայց նրանց էլ ինձ նման չի հաջողվում։

Ճիշտ է, ես բարձրահասակ չեմ, բայց գիտեմ ամեն ինչ, ինչ պետք է այդ դերին. նախ երգել գիտեմ, գլխիվայր շրջվելու մեջ մի հատ եմ, ձայնս չեմ վնեղծում, իսկ աչքերիս մասին ասում են, որ միայն ես կարող եմ այդպիսի աչքեր ունենալ։ Ես հավլսած եմ նաև կարծելու, որ պարզապես բախտս չի բանում դերասանության մեջ, և որ ինձ անպայման բախտի մի առանձնահատուկ աստղ է պետք։

Գևորը թեև առողջացել է, բայց փորձերը չեն վերսկսում, որովհետև հիմա էլ դասատուն է հիվանդացել։

Գնացի հիվանդանոց։ Դասատուն նայեց ինձ և ասաց.

— Դու կխաղաս բալիկ ջան, հավատա։

— Շնորհակալություն,— ասացի ու ամաչեցի։

— Դու, երևում է, լավ տղա ես,— վերջում ասաց նա։

— Շնորհակալություն։

Երբ դուրս եկա և հանձնեցի ինձնից մեծ խալաթը՝ քրտնել էի։ Իսկ ճանապարհին ինձ հանդիպեց երաժիշտ Կարիկը։

— Ո՞ւր...

— Տուն։

— Ասում են՝ դերասան ես ուզում դառնալ։

Ամաչեցի այն բանի համար, որ միշտ ինձ այդպես են դիմում, բայց դեռ ոչ մի դերում չեն տեսել։ Ես նրան ցտեսություն ասացի։

Իսկ տանը Գևորի ու իմ դերի պես այնքան եմ գլխիվայր վանգնել, որ գլուխս ծածկվել է կոշտուկներով, երգելուց էլ

ձայնս խզվել է, իսկ ձմեռը կոշտ կրունկներ է դարձել ոտքերիս տակ։

Մի խոտքով, ես էլ բան չթողեցի, պարապեցի. իմ տարիքի բոլոր տղաները ամեն ինչ ուզում են դառնալ։

ԳԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

ԱՐԱՅԻԿԻ ՆԱՄԱԿԸ

«Ամեն ինչ անցավ, մնացինք ձմեռը, իմ շնիկն ու ես։ Մեզ մոտ մինչև ձյան գալը անձրևում էր՝ կարծես երկնքից մի բան պետք է ընկնի։ Անձրևն էլ էր մարմանդ իջնում, ձյունն էլ։ Ես մարմանդ դպրոց եմ գնում, նույն կերպ սովորում դասերս, նույն կերպ ետ գալիս։ Անհանգիստն իմ որսորդական շունն է միայն, որը համարյա երեք ամսական է, բայց որսի չի գնացել։ Շնիկիս մի ամիս առաջ եմ գտել։ Նրստել էր ծառի տակ ու թաքնվել էր լիզում։ Մոտ գնացի և չգիտեմ ինչու, որոշեցի «Ֆանտոմաս» կոչել։ Նա ոտքից գլուխ սև էր, միայն աչքերն էին փայլում էլիզի աչքերի պես։

— Ֆանտոմա՜ս, Ֆանտո՛, մո՛տ եկ։

Եկավ։ Այդ օրվանից մտերմացանք։

Երբ ձյուն է գալիս Ֆանտոյի վրա, նրա մորթին փայլում է։

Հիմա էլ նստած է կողքիս և նայում է, թե ինչպես եմ նամակ գրում։

— Արայիկից ու Ֆանտոմասից՝ բարևներ, լավ է, չէ՞, Ֆանտո։

Գլխով է անում։

— Շարունակենք։

Ես պարապում եմ աշխարհագրություն, բարձրաձայն կարդում եմ քնախուզություն։ Մենք որոշել ենք ամառը որսի գընալ, եթե դու էլ համաձայն ես, գրիր։

Ինչպես միշտ, մայրիկն աշխատանքի է, մենք մենակ ենք տանը։

Մենք սպասում ենք քո պատասխանին՝ ես ու Ֆանտոն։

Քեզ միշտ հարգող, քո մորաքրոջ տղա Արայիկ»։

Կարդացի ու հուզվեցի։ Դուան զանգը ինձ սթափեցրեց,

փոստատարը նորից նամակ բերեց, այս անգամ Նունուշից։ Ես համարյա մոռացել էի նրան։

«Բարև Արամ, ես շատ լավ եմ, է՛լ «քարկտիկ» չեմ խաղում, ոչ էլ «արև-արև»։ Ես շատ եմ մտածել քո ընկեր Բենոյի մասին, դու լավն ես։ Ես էլ լուրջ եմ և խնամում եմ իմ փոքրիկ քրոջը, որի անունը Երազիկ է։ Նա ճանաչում է քեզ իմ պատմածներից։ Ես մեծ աղջիկ եմ, կարողանում եմ օգնել մայրիկին, որովհետև մինչև հիմա էլ արևի մեջ միայն նրան եմ տեսնում։ Երբ մենք գանք քաղաք, ես կգամ քեզ մոտ, գիտեմ, որ էլ չես կռվի, առաջ շատ կռվարար էիր։

Բարևներով՝ Նունուշ»։

Իհարկե չեմ կռվի։ Ես արդեն մեծ եմ, Նունուշ։

ԳԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԻՆ

ԶԱՆԳԵՐԻ ՄԱՍԻՆ

Աշխարհն ամեն մեկի համար մի մեծ զանգ է։ Ես էլ արդեն մեծ եմ և աշխատում եմ կյանքին նայել այնպես, ինչպես հայրիկը. նա ամենարբեր չէ զանգերի նկատմամբ։

Քաղաքամերձ ծառերը պտուղների ծանրությունից «խեղթացել են»։ Հայրիկն է այդպես ասում։

Զարմանալի կերպով նրա բոլոր ասածները տպավորվում են գլխումս, և ես խելոքանում եմ։

Չգիտեմ լավ է, թե վատ, բայց զարմանալի օր է։ Դասարանները կարմրել են վգկապներից։ Շփոթված եմ, ծանոթ աղմուկները լցվել են ականջներս, ես պատասխանել չեմ կարող Շուշանին ու Սեթին. նրանք մեծացել և ուրիշ են դարձել։ Գիտեմ, որ նրանք այս ամառը սարսափելի լավ են անցկացրել՝

անտառներում, սարերում, ճամբարներում կամ տատիկների մոտ։ Ես դեռ գլխի չեմ ընկել՝ իմ ամառվա որսը լավ էր, թե վատ, բայց Ֆանտոն լավ շուն էր, իսկ Նումնուշի քույրիկը՝ իսկական Երազիկ։ Հիշողությունս պոկելով նրանից, աղմոսկից ջոկեցի դասն տկսելու զանգը։ Երբ ուսուցչուհին ներս մտավ՝ ես մի բան գլխի ընկա։ Ես այդ ոչ ոքի պատմել չեմ կարող, նույնիսկ դժվարանում եմ ինքս ինձ պատմել աշխարհում իմ իմացած զանգերի, վերջի ու սկզբի զանգի մասին, չէ՞ որ նրանք համարյա ճակատագրական նշանակություն ունեն։

Ես առաջին անգամ զանգ լսել եմ մեր գյուղի եկեղեցում՝ թվում էր երկնքից է գալիս ձայնը և անտես մի ձեռք խփում, հա խփում է դրանք ինձ, մայրիկիս ու հայրիկիս համար։ Ես աչքերով էի լսում։

Դա շատ փոխեց զանգերի մասին ունեցած իմ կարծիքը։ Հետո էլի զանգեր ու զանգիկներ լսեցի, բայց եկեղեցունը մնաց իմ մեջ որպես անկրկնելի իրողություն ու հուշ։

Երկրորդ զանգը կախված էր հովվի ձիու վզից և մե՛կ աջ էր զնգում, մե՛կ ձախ։ Ես շատ երազեցի այդ զանգակավոր ձիուն նստած նախիր քշել, բայց... մանկությունս եկավ քաղաք։ Բազմապիսի ու բազում ձայներ լսեցի քաղաքում, որոնք խառնվել էին. տրամվայը զնգում էր, գործարանը զնգում էր, մեր տան հեռախոսը զնգում էր, մեր դուռը հյուր գալիս զնգում էր, Արամ, վեր կաց, Արամ, ուշացար, Արամ, զգույշ, Արամ, գուռը բաց արա, Արամ, տես ո՞վ է։

Իմ մեջ ծնվել է այն զգացողությունը, որ զանգը ինչ-որ բանի սկիզբ է, կամ ինչ-որ բանի վերջ։ Ես այդ սկզբի ու

վերջի, կամ վերջի ու սկզբի պատմությունն է, որ ուզում եմ անել։

Մեծանալուց առաջ և մեծանալուս ընթացքում ես շատ զանգեր լսեցի, դրանք իմ մեջ արթնացրին աշխարհ հասկացողությունը, որ այն միշտ զանգով է սկսում։

Հետո դպրոցն ինձ համար ամենալուրջ զանգն էր։ Տարիներ առաջ, երբ մենք եկանք, ամառը լցվել էր ամեն ինչի մեջ ու ամեն տեղ։ Այն լցվեց նաև մեր դպրոցը, և փակվեց ուսումնական տարին։ Մենք ծաղկեփնջեր տվինք ավարտողներին, նրանք բոլորն էլ մեծ աղջիկներ էին և մի-մյանց գրկած լաց էին լինում։ Ես հետաքրքրությունից կամեցա մեծ լինել, բայց ընկեր Գեղեցիկը ձեռքս բռնած տարավ։ Մուտքի մոտ սպասում էի աղջիկներին, որ նվիրեմ ձեռքիս բացիկը։

Նրա վրա գրել էի. «Թանկագին շրջանավարտ, այս տարվա սկզբին Դուք ինձ ողջունեցիք առաջին զանգի համար, իսկ հիմա ես եմ Ձեզ շնորհավորում վերջին զանգի համար։ Տրխրում եմ, որ Ձեզ համար դպրոցի զանգը վերջանում է։ Դուք իմ վերջն եք, և ես տիրում եմ ձեզ»։ Ինձ թվում էր հայրիկի օգնությամբ գրած այս բացիկը աշխարհի ամենամեծ ստեղծագործությունն էր։ Ես համոզված էի դրանում։ Այն ժամանակ վերջին անգամ արևը գետնին քսվելով մտավ ափերիս մեջ ու շոշափեց բացիկը, նա ինձ հետ համաձայն էր։ Հնչեց հուզմունքից դողացող ու հարբած զանգը։ Ես այլևս չմտածեցի և չհասկացված ինչ-որ բան տարա ինձ հետ։ Դա սկզբի ու վերջի կապն էր։ Կարծում էի, որ քիչ-քիչ կհասկանամ զանգերի պատմությունը, այն, որ հայրիկը մեծացել ու մոռացել է, որ մի օր էլ ես պետք է մոռանամ, որովհետև ես էլ պետք է մեծանամ։

Այդ ինչ-որ բանը մտել էր իմ մեջ օր-օրին և հասկացրել, որ էլ անհոգ երեխա չեմ։

Հիմա զանգերը շարունակվում են, և ես չեմ ուզում, որ լսել զանգերը վերջանան կյանքում։

Այս մասին կուզենայի պատմել Շուշանին, որի հետ կողք-կողքի նստել ենք նույն նստարանին.

— Ինչո՞ւ չես նստում, Արա՛մ,— ես հասկացա, որ դասի սկզբից կանգնած եմ մնացել։

Ես գլխի ընկա, թե ինչու բոլորը ծիծաղեցին, միայն գլխի չընկա, թե ինչու ես չեմ ծիծաղում։

Այսօր քսանիերորդ սեպտեմբերի մեկն է, և ես զարմանալի շփոթված եմ։

ԳԼՈԲՈՒՍՆ ՈՒ ՏՂԱՆ

ԳԼՈԲՈՒՍ — Ես քանի՞ տարեկան եմ, տղա։

ԱՐԱՄ — Մի՛լիարդ։

ԳԼՈԲՈՒՍ — Ճիշտ է։

ԱՐԱՄ — Ի՞նչն է ճիշտ։

ԳԼՈԲՈՒՍ — Որ գնալու ժամանակն է։

ԱՐԱՄ — Ո՞ւր։

ԳԼՈԲՈՒՍ — Կեղևս փոխելու։

ԱՐԱՄ — Գնա՛, բայց թող։

ԳԼՈԲՈՒՍ — Ի՞նչ թողնեմ։

ԱՐԱՄ — Բոլորը։

ԳԼՈԲՈՒՍ — Նրանք իմ մեջ են, բայց ես նրանց մեջ չեմ

ԱՐԱՄ — Բա որտե՞ղ ես։

ԳԼՈԲՈՒՍ — Ես թղթից սարքած ու ներկած մի գոնդ եմ։

ԱՐԱՄ — Ամեն ինչ էլ թղթից է սարքած։

ԳԼՈԲՈՒՍ — Ո՞չ ամեն ինչ։

ԱՐԱՄ — Գնաս բարով, գլոբուս, մենք գտանք իրար։

ԳԼՈԲՈՒՍ — Մնաս բարո՞վ, տղա՛ս, կորցնելուց հետո գտանք։

ԱՐԱՄ — Կյանքում այդպես է։

Հեռանալիս գլոբուսի միջից դուրս եկան Նումնուշը, Զրաշուշանը, ընկեր Գեղեցիկը, Արայիկը, մորաքույր Աստղիկը, Բենոն, Նաստյան, Թորիկը։

Քանի գնաց՝ գլոբուսը փոքրացավ, մարդիկ մեծացան, քանի գնաց՝ գլոբուսը հեռացավ՝ մարդիկ մոտ եկան։ Երբ գլոբուսը դարձավ հազիվ նշմարվող մի կետ, հասկացա, որ կարգին մեծացել եմ։ Իսկ գլոբուսը գնում է կեղևը փոխելու՝ աշխարհը շատ է հնացել։ Ես կամաց շշնջացի՝

— Գնաս բարո՞վ։

Գնացողներին վախենում են ուրիշ բան մաղթել։

Ես կանգնեցի ճանապարհի եզրին։

— Երբ կյանք մտնեմ՝ կհասկանամ ինչու եկար, ինչու գնացիր։ Հետո շուտ եկա ու քայլեցի։

Ես դիտեի, որ ժամանակը հաշտեցնում և տվորեցնում է ամեն ինչ։

Զանգերն սկսեցին զնգզնգալ և հիշեցնել ինչ-որ տկիզբներ ու վերջեր.

— Դու մեզ լավ լսիր, տղա՛ս, և չոկիր քոնը։

Ես գնում եմ իմ զանգը որոնելու, որ արևի մեջ է, Նումնուշի, Զրաշուշանի, «արվեստագետ» Բենոյի, վիեանամցի փոքրիկների, Արայիկի, կոմբայնի, Նաստյայի, հենակների, ճամփորդելու, շուկայի, Թանկ ու էժանի, կորած Թալիսմանի, էլիզի, ծաղկող Թորիկի ու համբերության մեջ է։

Երբ գտնեմ իմ զանգը, կպատասխանեմ ձեզ, թե ինչու մեծերն էլ էշեխանների նման են... և կգրեմ իմ հետադարձ հասցեն։

ՅԱՆԿ

Գլոբուսը 3

Պատմություն առաջին

Մենք գյուղում 4

Պատմություն երկրորդ

Շուշանը 7

Պատմություն երրորդ

«Արվեստագետը» 11

Պատմություն չորրորդ

Ես գիտեմ, որ ամենաշուտն այսօր եմ հասնելու տուն . 17

Պատմություն հինգերորդ

Մի բուռ ցորեն 21

Պատմություն վեցերորդ

Նաստյան 25

Պատմություն յոթերորդ

Հայրիկն ասաց, կոշիկները պետք չեն 29

Պատմություն ութերորդ

Հայերենի իմ դասը՝ պատանի ծաղկողի մասին . . 33

Պատմություն իններորդ

Շուկայից հետո հանգիստ է պետք 37

Պատմություն տասներորդ

Մանկություն 40

Պատմություն տասնմեկերորդ

Արայիկը 43

Պատմություն տասներկուերորդ

Էլիզը 47

Պատմություն տասներեքերորդ

Թեև ձյունը կոշտ կրունկներ է դառնում ոտքերիս տակ . . 51

Պատմություն տասնչորսերորդ

Արայիկի նամակը 55

Պատմություն վերջին

Ջանգերի մասին 57

Ջուլիետ Ավետիքի Մատինյան

Գլոբուսն ու տղան

Միջին ու բարձր տարիքի դպրոցականների համար

Խմբագիր՝ Ս. Ա. Վարդանյան
Նկարիչ՝ Ա. Ա. Հայկազյան
Գեղ. խմբագիր՝ Ջ. Ե. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Ալ. Հ. Մարգարյան
Սրբագրող սրբագրիչ՝ Վ. Ս. Գևորգյան

Հանձնված է արտադրության 26/IV 1973 թ.։
Ստորագրված է տպագրության 13/XI 1973 թ.։
Թուղթ տպագրական № 2, 70×108 1/32, տպագ. 2,0 մամ.=2,8 պայմ. մամ.։
Պատվեր 990։ ՎՖ 08274 Տպաքանակ՝ 10 000։ Գինը՝ 6 կ.։
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան տպագրական կոմբինատ, Երևան—9, Տերյան 91։